

- 12 Ուստի ըզպատիւ փառս առ Հասարակ
Հերքեալ հեռանայր յաշխարհէն բրնակ
Առ եղբւլ կեանն աստ յարատից պիտակ
Ուղղափառութեամբ հանդարտ համարձակ :
- 13 Ահա այս ինչ էր եղական պատճառ ,
Որ ռահ գործել տայր նրմա անպատճառ
Առ դալ դադարիլ յայս կողմանս իսպառ ,
Կեալ եւ մեռանիլ որպէս ուղղափառ :
- 14 Հասեալ ապաքէն Սարգիս մեր հանդիստ ,
Ի Մարտիկեացւոց մեծ նաւահանգիստ ,
Զաւուրս քառասուն կալեալ անդ ըզնիստ ,
Նոյն պանդրխտութեան հաճ է թէեւ խիստ :
- 15 Չուեալ ինեւ իսկ յետոյ անտուստ նա
Ժամանէր յԱնթիպ, անտի ի Գենուայ
Անդրստին ի շէնն որ կոչի Բիզայ ,
Ուստի վերջապէս աստ ի Լիգուռնայ :
- 16 Գալուստ մեր ուրեմն եղեւ յայս ամուր
Գեկտեմբեր ամսոյ յութ եւ տասն աւուր .
Աստ Սարգիս մեր նախ ըզդադար կաշնոյր
Ի մեր ժամատան ըստ հաճութեան իւր :
- 17 Գադարեալ մեր յայս շէն բազմավաճառ՝
Շուրջ ըզմեօք իսկոյն բոլորէր ըզպար
Աստէն բրնակեալ Հայոց մեր կաճառ
Յարդանօք մեծաւ եւ սիրելաբար :
- 18 Թէպէտ ոչ խոկայր Սարգիս բրնաւին՝
Անցանել ընդ այս քաղաք վերըստին ,
Այլ առ պաշտել զՕտօն ծընընդեան փրկչին՝
Ի սակս փոքր աւուրց օթէր աստըստին :